



«Ա.ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱՐԹԵՆԱՐԻԱՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԵԱՏՐՈՆ»  
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

N 692-L

«17» նոյեմբերի 2021 թ.  
ք. Երևան

«ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ԴԻԱՆՑ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ  
ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՅՎՈՂ ՎՆԱՍԻ  
ՆՎԱՋԵՑՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆՆ  
ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի և «Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի ե) ենթակետի պահանջները, ինչպես նաև հաշվի առնելով, որ ՀՀ կառավարության 2004 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 1616-Ն որոշմամբ հաստատված պետական ցուցակի 95.2-րդ կետի համաձայն «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ի շենքը համարվում է հանրապետական նշանակության պատմության և մշակույթի անշարժ հուշարձան՝

**հրամայում եմ.**

1. Սահմանել, որ Թատրոնի շենքի տարածքում արգելվում է ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նպատակով օգտագործվող ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) օգտագործումը:

2. Թատրոնի աշխատակազմի ղեկավարին՝ հիմք ընդունելով ՀՀ առողջապահության նախարարի 2020 թվականի մայիսի 27-ի թիվ 14-Ն հրամանով սահմանված «Ծխախոտային արտադրատեսակի կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչի օգտագործման արգելքի և սահմանափակումների մասին տեղեկատվություն պարունակող ցուցանակներին ներկայացվող պահանջները» 5-օրյա ժամկետում ապահովել, որ Թատրոնի տեսանելի վայրերում տեղադրվեն ծխախոտային արտադրատեսակի կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչի օգտագործման արգելքի և սահմանափակումների մասին տեղեկատվություն պարունակող ցուցանակներ:

3. Ընդունել ի գիտություն, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 173.2-րդ հոդվածի համաձայն սույն հրամանի 1-ին կետի պահանջի խախտումը համարվում է վարչական իրավախախտում և առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրիսունապատիկից երկուհարյուրապատիկի չափով, իսկ ֆիզիկական անձի նկատմամբ՝ հիսնապատիկի չափով:

4. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին կետի պահանջների խախտումը համարվում է աշխատանքային կարգապահության կանոնների խախտում և առաջացնում է ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված կարգապահական պատասխանատվություն:

5. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը դնել՝ Թատրոնի աշխատակազմի ղեկավար Ա. Դալլաթյանի վրա:

